Ալեքսանդր Ծատուրյան

Անջատման հուշերից

Անծի՛ր ու անծա՛յր դաշտերի միջով,
Օձի գալարով, սուլոց ու ճիչով,
Գընացքն է առա՛ջ թռչում, սըլանում,
Ծանոթ վայրերից ինձ հեռո՛ւ տանում:

Ու ո՛րքան առաջ, ու ո՛րքան հեռի,
Ա՛յնքան սիրաշունչ ու թարմ հուշերի
Վառ զգացումն է իմ հոգին հուզում
Ես քե՛զ եմ հիշում, քեզ՝ իմ երազում...

Հնչո՛ւմ է, ընկե՛ր, դեռ իմ ականջին
Իմ ուղին օրհնող քո խոսքը վերջին.
Հնչում թախծալի սըրտիդ աղոթանք
«Տե՛ր, քե՛զ եմ հանձնում սիրելի մի կյանք...»

Մի՛ թախծիր, ընկեր, անշա՛տ-անմեկի՛ն
Քե՛զ հետ է հավերժ իմ սիրող հոգին,
Եվ միտքըս՝ թռչուն, սիրո թև առնում,
Քո՛ գիրկն է հեռվից անզուսպ սավառնում...